ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն բժիշկ-ճառագայթաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թումանյան փողոցի հ.31 Ա հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բժիշկ-ճառագայթաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը ծնվել է 1934 թվականին, Երևանում:

1958 թվականին ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: 1964-1967 թվականներին եղել է Լ. Հովհաննիսյանի անվան սրտաբանության ինստիտուտի գիտական քարտուղար, տնօրենի տեղակալ բուժական (1967-1972), գիտական աշխատանքների (1972-1986) գծով, 1986 թվականին՝ բժշկական ճառագայթաբանության գիտահետազոտական ինստիտուտի (1995 թվականից՝ Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն) տնօրեն: 1986 թվականին եղել է ՀՀ ռենտգենաբանների և ճառագայթաբանների գիտական ընկերության ճառագայթաբանների բաժանմունքի նախագահը:

Ն. Հովհաննիսյանը մահացել է 2021 թվականի ապրիլի 10-ին, Երևանում:

Ն. Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թումանյան փողոցի հ.31Ա հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է Ռադիոլոգների հայկական ասոցիացիայի նախագահի կողմից: Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ